

**«Արմենիան Զափըր Փրոգրամ»  
փակ բաժնետիրական ընկերություն**

**Ֆինանսական հաշվետվություններ  
2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

## Բովանդակություն

Տնօրենների խորհրդի կազմը	2
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Հաշվապահական հաշվեկշիռ	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8-31

## «Արմենիան Բափրը Փրոգրամ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն

Երևան 0010

Խանջյան փող. 19

## Թարգմանության ծանուցում

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմված 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունը պատրաստվել են անգլերեն լեզվով: Այդ փաստաթղթերին կից ներկայացվող թարգմանությունը պատրաստվել է օգտագործողների հարմարության համար: Հայերեն և անգլերեն տարբերակների անհամապատասխանության դեպքում միանշանակորեն գերակայում է անգլերեն տարբերակը:

## **Տնօրենների խորհրդի կազմը**

Վալերի Մեջլումյան	Նախագահ
Գագիկ Արզումանյան	Գործադիր տնօրեն
Նիկոլայ Ֆեոֆանով	Ալավերդու տարածաշրջանային տնօրեն, Արտադրական վարչության պետ



**KPMG Armenia cjsc**  
8 Hanrapetutian Street  
Yerevan 0010  
Republic of Armenia

**Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ**  
Հանրապետության 8  
Երևան 0010  
Հայաստանի Հանրապետություն

Telephone: Հեռախոս + 374 (10) 566 762  
Fax: Ֆաքս + 374 (10) 566 762  
Internet: Ինտերնետ www.kpmg.am

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի  
Տնօրենների խորհրդի անդամներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2005թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները: Սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Գոյություն ունի վկայություն առ այն, որ շնորհիվ հողի հաշվեկշռային արժեքը, որը ներկայացված է զրո գումարով պակաս է քան վերջինիս իրական արժեքը: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» համաձայն, որպես հաշվապահական հաշվառման քաղաքականություն Ընկերությունն ընտրել է շնորհված ոչ դրամային ակտիվների և շնորհի իրական արժեքով հաշվառման քաղաքականությունը: 2005թ.-ին Հողային օրենսգրքում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում Ընկերությանը որպես շնորհ տրված հողի իրական արժեքի գնահատում չի իրականացվել: Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ այս անհամապատասխանության ազդեցությունը, եթե այդպիսին լինի, հողի, շնորհի, զուտ շահույթի, հարկերի և չբաշխված շահույթի 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեքի վրա չի որոշվել:

Մեր կարծիքով, բացառությամբ նախորդ պարբերությունում ներկայացված խնդիրների ազդեցության, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2005թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների համաձայն:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ  
Լիցենզավորված աուդիտորներ  
26 հունիսի 2006թ.

*KPMG Armenia ej'sc*



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» լիակ բաժնետիրական ընկերություն,  
հանդիսանում է «Քեյ-Փի-Էմ-Ջի Ընկերություն» շվեյցարական  
կոոպերատիվի հայկական անդամը:

		<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	<b>Ծնթգ.</b>	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
<b>Հատույթ</b>	4	22,492,614	19,119,579
Վաճառքի ինքնարժեք		(21,092,023)	(15,375,327)
Համախառն շահույթ		<u>1,400,591</u>	<u>3,744,252</u>
Այլ գործառնական եկամուտ	5	27,634	308,828
Իրացման ծախսեր	6	(293,857)	(327,063)
Վարչական ծախսեր	7	(774,024)	(741,566)
Այլ գործառնական ծախսեր		(117,476)	(63,836)
Արժեզրկումից կորուստներ	8	(345,372)	(371,687)
(Վնաս)/շահույթ գործառնություններից		<u>(102,504)</u>	<u>2,548,928</u>
Չուտ ֆինանսական ծախսեր	9	(36,566)	50,627
(Վնաս)/շահույթ մինչև հարկումը		<u>(139,070)</u>	<u>2,599,555</u>
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	10	4,849	(244,124)
Տարվա զուտ (վնաս)/շահույթ		<u>(134,221)</u>	<u>2,355,431</u>

4-ից 31-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Տնօրենների խորհրդի կողմից 2006թ. հունիսի 26-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

  
**Գ. Արզումանյան**  
 Գործադիր տնօրեն

  
**Տ. Արտյունյան**  
 Գլխավոր հաշվապահ



Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 8-ից 31-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 1:

	<b>Ծնթգ</b>	<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	.	<u>հազ. դրամ</u>	<u>հազ. դրամ</u>
<b>Ակտիվներ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	11	4,764,338	4,835,996
Ներդրումային գույք	12	141,627	-
Ոչ նյութական ակտիվներ	13	34,061	2,519
Հետաձգված հանքաարդյունաբերական ծախսումներ	14	553,280	44,331
Երկարաժամկետ ներդրումներ	15	25,647	25,647
		<u><b>5,518,953</b></u>	<u><b>4,908,493</b></u>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ	16	2,795,852	2,114,053
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	17	4,207,857	1,575,665
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18	123,388	673,209
		<u><b>7,127,097</b></u>	<u><b>4,362,927</b></u>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<u><u><b>12,646,050</b></u></u>	<u><u><b>9,271,420</b></u></u>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
<b>Կապիտալ և պահուստներ</b>			
Բաժնետիրական կապիտալ	19	3,069,716	3,069,716
Վերագնահատման պահուստ		2,556,206	2,635,304
Կուտակված շահույթ		666,047	721,170
		<u><b>6,291,969</b></u>	<u><b>6,426,190</b></u>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Հետաձգված հարկային պարտավորություն	20	<b>324,648</b>	<b>501,036</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Կարճաժամկետ փախառություններ	21	1,593,826	1,128,720
Վճարման ենթակա շահութահարկ		-	206,040
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	22	4,435,607	1,009,434
		<u><b>6,029,433</b></u>	<u><b>2,344,194</b></u>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<u><u><b>12,646,050</b></u></u>	<u><u><b>9,271,420</b></u></u>

Հաշվապահական հաշվեկշիռը պետք է ընթերցվի 8-ից 31-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

*Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 1:*

	<b>2005թ. հազ. դրամ</b>	<b>2004թ. հազ. դրամ</b>
<b>ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b>		
<b>Ձուտ (վնաս)/շահույթ մինչև հարկումը</b>	<b>(139,070)</b>	<b>2,599,555</b>
Ճշգրտում հետևյալ հոդվածների գծով՝		
Հիմնական միջոցների մաշվածություն	163,381	155,445
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	1,258	839
Վնաս հիմնական միջոցների օտարումից	5,395	9,157
Արժեզրկման գծով պահուստ	345,372	371,687
Ձուտ շահույթ փոխարժեքային տարբերություններից	(77,656)	(311,835)
Տոկոսային ծախսեր	114,222	261,784
<b>Գործառնական շահույթ նախքան փոփոխությունները շրջանառու կապիտալում</b>	<b>412,902</b>	<b>3,086,632</b>
Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների (աճ)/նվազում	(2,745,602)	105,992
Պաշարների աճ	(1,027,171)	(597,119)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում)	3,492,956	(949,098)
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնություններից</b>	<b>133,085</b>	<b>1,646,407</b>
Վճարված տոկոսներ	(107,352)	(211,808)
Վճարված հարկեր	(377,579)	(78,100)
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>	<b>(351,846)</b>	<b>1,356,499</b>
<b>ՆԵՐԿՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b>		
Հիմնական միջոցների ձեռք բերում	(251,100)	(627,409)
Ներդրումներ հանքաարդյունաբերական գույքում	(508,949)	(100,828)
Ոչ նյութական ակտիվների ձեռք բերում	(32,800)	-
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից	12,355	9,634
Մուտքեր տրամադրված վարկից	-	23,000
<b>Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>	<b>(780,494)</b>	<b>(695,603)</b>
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b>		
Մուտքեր կարճաժամկետ փոխառություններից/կարճաժամկետ փոխառությունների (մարում)	522,449	(79,756)
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>	<b>522,449</b>	<b>(79,756)</b>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ տարվա ընթացքում	(609,891)	581,140
Փոխանակման փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	60,070	11,037
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	673,209	81,032
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ (ծնթգ. 18)</b>	<b>123,388</b>	<b>673,209</b>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 8-ից 31-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

*Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 1:*



հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2004թ.	3,069,716	2,763,244	(1,762,201)	4,070,759
Տարվա զուտ շահույթ	-	-	2,355,431	2,355,431
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի իրացում	-	(127,940)	127,940	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2004թ.	3,069,716	2,635,304	721,170	6,426,190
Մնացորդը առ 1 հունվարի 2005թ.	3,069,716	2,635,304	721,170	6,426,190
Տարվա զուտ վնաս	-	-	(134,221)	(134,221)
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի իրացում	-	(79,098)	79,098	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2005թ.	3,069,716	2,556,206	666,047	6,291,969

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 8-ից 31-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 1:

## 1 Նախապատմություն

### (ա) Կազմակերպությունը և հիմնական գործունեությունը

«Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») հիմնադրվել է 1997թ. օգոստոսին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության հայտարարված կապիտալը կազմում է 40 միլիոն դրամ: 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն էին՝

- ՎԱԼԵԶՍ Ֆ.Ս. Իսթերիշմենթ (հիմնադրված Լիխտենշտեյնում) - 80.7%
- Վալերի Սեջույան - 19.3%

Ընկերության հիմնական գործունեությունը սև պղնձի արտադրությունն ու իրացումն է: Ի լրումն, Ընկերությունը ներագրավված է հանքերի շահագործման և Հայաստանում հանքարդյունաբերական գործունեության զարգացման գործում: Ընկերությունն ունի հանքերի շահագործման հետևյալ լիցենզիաները՝

- Ալավերդու հանք – լիցենզիա # ՀԱ-Լ-14/89, ուժի մեջ է 2001թ. օգոստոսի 6-ից 2026թ. օգոստոսի 6-ն ընկած ժամանակահատվածում,
- Թեղուրի հանք – լիցենզիա # ՀԱ-Լ-14/90, ուժի մեջ է 2001թ. փետրվարի 8-ից 2026թ. փետրվարի 8-ն ընկած ժամանակահատվածում:

### (բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալված գործունեությունը կապված է ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ներկայացված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության ֆինանսական դրության և գործառնությունների վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## 2 Պատրաստման հիմունքները

### (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի («ՀՀՍՄԽ») կողմից հրատարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՍՄ») պահանջների և ՀՀՍՄԽ-ի Հաշվետվությունների մեկնաբանման միջազգային հանձնաժողովի կողմից հրապարակված մեկնաբանությունների համաձայն:

### (բ) Պատրաստման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով (ծանոթագրություն 3 ք):

**(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Դրամը հանդիսանում է սույն ֆինանսական հաշվետվությունների ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը: Որպես ֆունկցիոնալ արժույթ դեկավարությունը սահմանել է դրամը, քանի որ վերջինս արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: ՀՀ դրամը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս փոխարկելի արժույթ չէ:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

**(դ) Գնահատումներ**

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Ընկերության դեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

### **3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

**(ա) Արտարժույթով գործարքներ**

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են դրամի այդ ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Սկզբնական արժեքով կամ վերագնահատված արժեքով ներկայացված, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են դրամի գործարքի կամ վերագնահատման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

**(բ) Հիմնական միջոցներ**

**(i) Մեփական ակտիվներ**

Հիմնական միջոցների միավորները ներկայացված են վերագնահատված արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Մեփական ուժեքով կառուցված ակտիվի սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, աշխատուժի ծախսումները և արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը: Կառավարության կողմից որպես շնորհ տրված հողը ներկայացված է իրական արժեքով: Ղեկավարությունը կանոնավոր կերպով վերագնահատում է հիմնական միջոցների արժեքները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են

որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

**(ii) Հետագա ծախսումներ**

Հիմնական միջոցների առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ներառյալ հիմնական ստուգումները և վերանորոգման ծախսումները, կապիտալացվում են: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ նրանք ավելացնում են հիմնական միջոցների միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս՝ կատարվելու ժամանակաշրջանում:

**(iii) Վերագնահատում**

Ակտիվի հաշվեկշռային արժեքի վերագնահատման հետևանքով առաջացած աճն ան-միջականորեն վերագրվում է սեփական կապիտալին: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Սակայն եթե այդ նվազումը հակադարձում է նույն ակտիվի սեփական կապիտալում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, այն ճանաչվում է սեփական կապիտալում:

**(iv) Մաշվածություն**

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից:

- Ծեներեր 50 տարի
- Կապիտալ ներդրումներ վարձակալված միջոցներում 20 տարի
- Սեքենա-սարքավորումներ 2-10 տարի
- Տրանսպորտային միջոցներ 10 տարի
- Տնտեսական գույք 2-10 տարի

**(v) Անավարտ շինարարություն**

Անավարտ հիմնական միջոցներ են հանդիսանում կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով: Սկզբնական արժեքը ներառում է նյութերի ձեռք բերման արժեքը, աշխատուժի ծախսումները և այլ ուղղակի ծախսումները: Անավարտ շինարարության գծով մաշվածության հաշվարկն սկսվում է համապատասխան ակտիվների կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից:

**(գ) Ներդրումային գույք**

**(i) Ներդրումային գույք**

Ներդրումային գույքը ներկայացված է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

**(ii) Մաշվածություն**

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ներդրումային գույքի առանձին միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 50 տարի:

**(դ) Ոչ նյութական ակտիվներ**

**(i) Ոչ նյութական ակտիվներ**

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

**(ii) Ամորտիզացիա**

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ամորտիզացիայի հաշվարկը սկսվում է ակտիվը շահագործման հանձնելու պահից:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

- Համակարգչային ծրագրեր 2 տարի
- Այլ ոչ նյութական ակտիվներ 3-10 տարի

**(ե) Ներդրումներ**

Ներդրումները ճանաչվում (ապաճանաչվում) են, երբ Ընկերությունը ձեռք է բերում (կորցնում է) վերահսկողությունը ակտիվի պայմանագրային իրավունքների հանդեպ:

Ներդրումները դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի և չափվում են իրական արժեքով: Իրական արժեքով չափելու արդյունքում առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում:

Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքը վերջիններիս գնանշված առքի գինն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Սեփական կապիտալի արժեթղթերում ներդրումները, որոնք չունեն գնանշված գին բորսայում և որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել այլ եղանակներով, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

**(զ) Հետաձգված հանքաարդյունաբերական ծախսումներ**

Նախաարտադրական հանքաարդյունաբերական ծախսերը դասակարգված են ըստ հետաքրքրության տեղամասերի հիմք ընդունելով հետևյալ սկզբունքները՝

- Նախաարտադրական հետազոտության ծախսումները (հետախուզական աշխատանքներ, հանքանյութերի գծով իրավունքների ձեռք բերում, հետազոտություններ, գնահատում, զարգացում կամ շինարարություն) կուտակվում են ըստ հետաքրքրության տեղամասերի և գրանցվում են որպես հետաձգված ծախսեր հանքերի գծով:
- Հետաքրքրության տվյալ տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման տնտեսական նպատակահարմարության հաստատման դեպքում, այս տեղամասին վերաբերող հանքերի գծով հետաձգված ծախսերը վերադասակարգվում են որպես հանքաարդյունաբերական գույք:
- Հետաքրքրության տվյալ տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման տնտեսական նպատակահարմարության չհաստատման դեպքում, այս տեղամասի հանքերի գծով հետաձգված ծախսերը ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, երբ չի հաստատվել օգտակար հանածոների արդյունահանման տնտեսական նպատակահարմարությունը:
- Հետաքրքրության առանձին տեղամասին վերաբերող հանքերի գծով հետաձգված ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետաքրքրության տեղամասում օգտակար հանածոների արդյունահանումը հաստատվել է որպես տնտեսապես նպատակահարմար, բայց չի նախատեսվում այլ նկատառումներից ելնելով:
- Առանձին տեղամասին վերաբերող հանքերի գծով հետաձգված ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե երեք տարվա ընթացքում այս տեղամասում օգտակար հանածոների արդյունահանումը չի հաստատվել որպես տնտեսապես նպատակահարմար և չի մշակվել ծրագիր օգտակար հանածոների արդյունահանման համար:
- Հաստատված, բայց չմշակված հետաքրքրության տեղամասի գծով հետաձգված ծախսերը պարբերաբար վերագնահատվում են՝ տնտեսական նպատակահարմարությունը որոշելու համար: Եթե պարզվում է, որ տեղամասում հանածոների արդյունահանումը տնտեսապես նպատակահարմար չէ, հետաձգված ծախսերն ամփոփապես դուրս են գրվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:
- Հանքերի գծով կուտակված ծախսերն ամորտիզացվում են կիրառելով արտադրության միավորի մեթոդը, որն իրենից ներկայացնում է ընթացիկ ժամանակաշրջանում արտահանված հանքանյութի փաստացի քանակի հարաբերությունը վերջինիս ակնկալվող քանակին:

**(է) Պաշարներ**

Պաշարները, ներառյալ անավարտ արտադրանքը, ներկայացված են սկզբնական արժեքի և իրացման գուտ արժեքի նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատվող գինն է՝ հանած ավարտի հասցման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների սկզբնական արժեքը հիմնված է միջին կշռված արժեքի վրա և ներառում է պաշարների ձեռք բերման ու պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Սեփական ուժերով կառուցված պաշարների և

անավարտ արտադրանքի սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսերի համապատասխան մասը՝ ելնելով սովորական արտադրական հզորությունից:

**(ը) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր**

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերը ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

**(թ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամարկղի դրամական միջոցները և բանկային հաշիվները:

**(ժ) Արժեզրկում**

Ընկերության ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Այդպիսի հայտանիշի գոյության դեպքում գնահատվում է, ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից բոլոր կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

**(i) Փոխհատուցվող գումարի հաշվարկ**

Ընկերության դեբիտորական պարտքերի փոխհատուցվող գումարը հաշվարկվում է ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքով, որը զեղչվում է ակտիվին բնորոշ սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերը չեն զեղչվում:

Մյուս ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց վաճառքի գուտ գնի և օգտագործման արժեքի առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքին՝ օգտագործելով մինչև հարկումը կիրառելի զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի ներկա շուկայական գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը:

**(ii) Արժեզրկումից կորուստի հակադարձում**

Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձություններին:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով այն չի գերազանցում ակտիվի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, հաշվի առնելով համապատասխան մաշվածությունը և ամորտիզացիան, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

**(հ) Վարկեր և փոխառություններ**

Վարկերն ու փոխառությունները սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է տրված փոխհատուցման իրական արժեքը՝ համաձայն համապատասխան գործարքների հետ կապված ծախսումները: Հետագա ճանաչումից հետո վարկերն ու փոխառությունները ներկայացվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

**(լ) Հատկացումներ կենսաթոշակային հիմնադրամին**

Ընկերությունը հատկացումներ է կատարում Հայաստանի պետական կենսաթոշակային հիմնադրամին իր աշխատակիցների համար: Այդ հատկացումները ծախսագրվում են կատարվելու ժամանակաշրջանում:

**(խ) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է հաշվապահական հաշվեկշռում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են, զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը, օգտագործելով զեղչման մինչև հարկումը կիրառելի այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի ներկա շուկայական գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտականությանը բնորոշ ռիսկերը:

**(ծ) Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր**

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը ներկայացված են սկզբնական արժեքով:

**(կ) Հարկում**

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարրերին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Հետաձգված հարկերի գումարը հիմնված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող եղանակի վրա՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և որոնք կկիրառվեն այն ժամանակաշրջանում, երբ ակնկալվում է ժամանակավոր տարբերությունների հակադարձումը:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ակտիվները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

**(հ) Հասույթ**

Վաճառված ապրանքների իրացման գինը որոշվում է սեփականության հետ կապված զգալի ռիսկերն ու օգուտները գնորդին փոխանցելուց հետո 2 ամսվա ընթացքում: Իրացման պայմանագրերը հաշվառվում են որպես ամանցյալ գործիք պարունակող հիմնական պայմանագրեր:

Ապրանքների իրացումից հասույթը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հիմնական պայմանագրի իրական արժեքով, երբ գնորդին են փոխանցվում սեփականության հետ կապված զգալի ռիսկերն ու օգուտները: Ածանցյալ ֆինանսական գործիքը սկզբնապես ճանաչվում է իրական արժեքով՝ հետագայում ճշգրտումներ կատարելով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ածանցյալ ֆինանսական գործիքը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հաշվապահական հաշվեկշռում ներկայացվում է հիմնական պայմանագրի հետ մեկտեղ:

**(ձ) Վաճառքի ինքնարժեք**

Վաճառքի ինքնարժեքը ներառում է ձեռք բերման, փոխարկման հետ կապված ծախսերը և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

**(ղ) Չուտ ֆինանսական ծախսեր**

Չուտ ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով վճարվելիք տոկոսները, ներդրված միջոցների գծով ստացվելիք տոկոսները, փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթը և վնասը, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ներդրումների օտարումից առաջացած շահույթը և վնասը:

**(՛) Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ**

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Ընկերության գործունեության վրա: Ընկերությունը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- ՖՀՄՍ 6 «Օգտակար հանածոների հետազոտություն և գնահատում», որը կգործի 2006թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ստանդարտը ներառում է օգտակար հանածոների հետազոտության և գնահատման համար օգտագործվող նյութական և ոչ նյութական ակտիվների տարանջատման պահանջ և սահմանում է այն մակարդակը, որտեղ պետք է կատարվի արժեզրկման ստուգում: Ընկերությունը դեռևս չի վերլուծել նոր ստանդարտի հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության արդյունքների վրա:

- ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. Բացահայտում», որը կգործի 2007թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ստանդարտը պահանջում է Ընկերության ֆինանսական գործիքների ավելի մանրամասն բացահայտում: Նոր ստանդարտն ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ գործունեության արդյունքների վրա:
- ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում - Կապիտալին վերաբերող բացահայտումներ» ստանդարտի փոփոխություն, որը կգործի 2007թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ստանդարտը պահանջում է Ընկերության կապիտալի ավելի մանրամասն բացահայտում: Նոր ստանդարտն ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ գործունեության արդյունքների վրա:

#### 4 Հասույթ

	<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Հասույթ ապրանքների իրացումից	22,380,380	18,979,601
Հասույթ ծառայությունների մատուցումից	112,234	139,978
	<u>22,492,614</u>	<u>19,119,579</u>

#### 5 Այլ գործառնական եկամուտ

	<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Նախկինում դուրս գրված պարտքերի վերականգնում	-	251,135
Եկամուտ բացահայտված պաշարներից և այլ ակտիվներից	6,335	45,595
Եկամուտ գործառնական վարձակալությունից	18,605	22,394
Զուտ եկամուտ պաշարների վաճառքից	6,658	(3,159)
Վնաս հիմնական միջոցների օտարումից	(5,395)	(9,157)
Այլ եկամուտ	1,431	2,020
	<u>27,634</u>	<u>308,828</u>

#### 6 Իրացման ծախսեր

	<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Փոխադրման ծախսեր	260,182	301,459
Մաքսային տուրքեր ապրանքների գծով	6,167	7,344
Շուկայավարման և գովազդի ծախսեր	-	1,433
Այլ իրացման ծախսեր	27,508	16,827
	<u>293,857</u>	<u>327,063</u>

## 7 Վարչական ծախսեր

	<b>2005թ. հազ. դրամ</b>	<b>2004թ. հազ. դրամ</b>
Աշխատավարձի գծով ծախսեր	298,237	322,571
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	122,487	56,356
Պահպանման ծախսեր	51,531	20,472
Մաշվածություն	50,090	52,473
Կոմունալ և հաղորդակցության ծախսեր	35,235	35,248
Ներկայացուցչական և գործողման ծախսեր	29,779	64,403
Բանկային ծառայությունների վճարներ	20,862	29,872
Աուդիտի և խորհրդատվական ծառայությունների վարձավճարներ	7,874	7,288
Տույժեր և տուգանքներ	2,355	17,119
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	1,258	839
Այլ	154,316	134,925
	<b>774,024</b>	<b>741,566</b>

Աշխատավարձի գծով ծախսերը ներառում են 33,215 հազար դրամ գումարով պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները (2004թ-ին՝ 37,894 հազար դրամ):

2005թ-ին Ընկերության աշխատակիցների միջին թիվը կազմում էր 729 (2004թ-ին՝ 645): 2005թ-ին աշխատակազմի գծով ընդհանուր ծախսերը (արտադրամասեր և վարչական բաժին) կազմում էին 847,406 հազար դրամ (2004թ-ին՝ 697,002 հազար դրամ):

## 8 Արժեզրկումից կորուստներ

	<b>2005թ. հազ. դրամ</b>	<b>2004թ. հազ. դրամ</b>
Հետաձգված հանքարդյունաբերական ծախսումներ (ծանոթագրություն 14)	-	377,190
Հիմնական միջոցներ (ծանոթագրություն 11)	-	203,066
Ստացման ենթակա ԱԱՀ	-	(208,569)
Պաշարներ (ծանոթագրություն 16)	345,372	-
	<b>345,372</b>	<b>371,687</b>

## 9 Չուտ ֆինանսական ծախսեր

	<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Տոկոսային ծախս	114,222	261,784
Չուտ շահույթ փոխարժեքային տարբերություններից	(77,656)	(311,835)
Տոկոսային եկամուտ	-	(576)
	<u>36,566</u>	<u>(50,627)</u>

## 10 Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)

Մինչև 2008 ֆինանսական տարվա վերջը Ընկերությունը պարտավոր է շահութահարկը վճարել հարկային օրենսդրությամբ սահմանված դրույքի կեսի չափով: 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հարկի օրենսդրությամբ սահմանված դրույքը կազմում էր 20% (2004թ-ին՝ 20%):

	<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Ընթացիկ հարկային ծախս		
Ընթացիկ տարի	167,529	293,631
Նախորդ ժամանակաշրջանի ճշգրտում	4,010	-
	<u>171,539</u>	<u>293,631</u>
Հետաձգված հարկային ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(176,388)	(49,507)
	<u>(4,849)</u>	<u>244,124</u>

### Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	<b>2005թ.</b>	<b>%</b>	<b>2004թ.</b>	<b>%</b>
	<b>հազ. դրամ</b>		<b>հազ. դրամ</b>	
(Վնաս)/շահույթ մինչև հարկումը	(139,070)		2,599,555	
Ակնկալվող հարկային ծախսը՝ հաշվարկված կիրառելի հարկային դրույքով	(13,907)	10.0	259,956	10.0
Չնվազեցվող/չհարկվող հոդվածներ	5,048	(3.6)	(15,832)	(0.6)
Նախորդ ժամանակաշրջանի ճշգրտում	4,010	(2.9)	-	-
	<u>(4,849)</u>	<u>3.5</u>	<u>244,124</u>	<u>9.4</u>

## 11 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հոկ և շենքեր	Կապիտալ ներդրումներ վարձակալված միջոցներում	Մեքենա- սարքավոր.	Տրանսպորտ. միջոցներ	Տնտեսակ. գույք	Չօգտագործվող հիմնական միջոցներ	Ընդամենը
<b><i>Մկրբնական արժեք/Վերագնահատված արժեք</i></b>							
Առ 1 հունվարի 2004թ.	2,326,589	70,216	1,408,613	32,890	128,604	882,570	4,849,482
Ավելացումներ	176,005	-	256,633	8,544	5,356	180,871	627,409
Օտարումներ	-	-	(19,655)	(551)	(636)	-	(20,842)
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	2,502,594	70,216	1,645,591	40,883	133,324	1,063,441	5,456,049
Ավելացումներ	-	-	30,091	9,596	4,693	206,720	251,100
Օտարումներ	-	-	(15,409)	-	(38)	(6,167)	(21,614)
Վերադասակարգումներ	(102,347)	-	119,775	33,856	25,841	(220,622)	(143,497)
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	2,400,247	70,216	1,780,048	84,335	163,820	1,043,372	5,542,038
<b><i>Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ</i></b>							
Առ 1 հունվարի 2004թ.	99,977	12,653	85,135	5,525	41,879	18,424	263,593
Տարվա ծախս	50,050	3,511	79,080	3,516	19,288	-	155,445
Օտարումներ	-	-	(1,797)	(18)	(236)	-	(2,051)
Արժեզրկումից կորուստներ	-	-	-	-	-	203,066	203,066
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	150,027	16,164	162,418	9,023	60,931	221,490	620,053
Տարվա ծախս	40,233	3,511	92,131	5,357	22,149	-	163,381
Օտարումներ	-	-	(3,753)	-	(28)	(83)	(3,864)
Վերադասակարգումներ	(1,892)	-	(2,316)	(580)	9,349	(6,431)	(1,870)
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	188,368	19,675	248,480	13,800	92,401	214,976	777,700
<b><i>Չուտ հաշվեկշռային արժեք</i></b>							
Առ 1 հունվարի 2004թ.	2,226,612	57,563	1,323,478	27,365	86,725	864,146	4,585,889
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	2,352,567	54,052	1,483,173	31,860	72,393	841,951	4,835,996
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	2,211,879	50,541	1,531,568	70,535	71,419	828,396	4,764,338

Հիմնական միջոցների վերագնահատումն իրականացվել է 2001թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ լիցենզավորված գնահատող՝ «Արթին Էնթրփրայս» ՓԲԸ-ի կողմից: Շարժական հիմնական միջոցները վերագնահատվել էին իրական արժեքով, ոչ շարժական հիմնական միջոցները գնահատվել էին փոխարինման ամորտիզացված արժեքով: Եթե հիմնական միջոցները չվերագնահատվեին, վերջիններիս զուտ հաշվեկշռային արժեքը 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր 1,720,120 հազար դրամ (2004թ-ին՝ 1,773,587 հազար դրամ): Բոլոր ոչ շարժական հիմնական միջոցները գրավադրված են բանկից ստացված վարկերի դիմաց: Բոլոր շարժական հիմնական միջոցները, որոնց արժեքը գերազանցում է 10,000 եվրոյին համարժեք դրամը, գրավադրված են բանկից ստացված վարկերի դիմաց (ծանոթագրություն 21):

Ղեկավարության կարծիքով 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների իրական արժեքն էականորեն չի տարբերվում վերջիններիս հաշվեկշռային արժեքից, այդ իսկ պատճառով 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերագնահատում չէր պահանջվում:

### Հողի գնահատում

2005թ-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց ՀՀ Հողային օրենսգրքում, համաձայն որի սև պղնձի արտադրության համար օգտագործվող հողի սեփականության իրավունքը փոխանցվեց Ընկերությանը: Սույն ֆինանսական հաշվետվություններում հողը ներկայացված է զրո արժեքով, քանի որ Ընկերության ղեկավարությունը չի իրականացրել հողի գնահատում իրական արժեքը գնահատելու համար և մտադիր է հողի գնահատումը հանձնարարել անկախ գնահատողի 2006թ-ին:

### Վերադասակարգում ներդրումային գույքի

Տարվա ընթացքում 141,627 հազար դրամ զուտ հաշվեկշռային արժեքով (2004թ-ին՝ զրո դրամ) շենքերը վերադասակարգվեցին ներդրումային գույքի:

## 12 Ներդրումային գույք

	2005թ. հազ. դրամ
<b>Սկզբնական արժեք</b>	
Առ 1 հունվարի	-
Վերադասակարգումներ	143,497
Առ 31 դեկտեմբերի	143,497
<b>Ամորտիզացիա</b>	
Առ 1 հունվարի	-
Վերադասակարգումներ	1,870
Առ 31 դեկտեմբերի	1,870
<b>Զուտ հաշվեկշռային արժեք</b>	
Առ 1 հունվարի	-
Առ 31 դեկտեմբերի	141,627

Ներդրումային գույքն իրենից ներկայացնում է հիմնական միջոցներից վերադասակարգված շենքեր: Ներդրումային գույք հանդիսացող վարձակալության հանձնած բոլոր շենքերը ձեռք են բերվել 2004թ-ին: Ձեռք բերման ամսաթվից հետո շենքերի իրական արժեքներում փոփոխություններ չեն կատարվել, այդ իսկ պատճառով, ներդրումային գույքի իրական արժեքն էականորեն չի տարբերվում սկզբնական արժեքից:

### 13 Ոչ նյութական ակտիվներ

	<b>հազ. դրամ</b>
<b>Սկզբնական արժեք</b>	
Առ 1 հունվարի 2004թ.	15,393
Օտարումներ	(11,616)
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	3,777
Ավելացումներ	32,800
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	36,577
<b>Անորոշագիս</b>	
Առ 1 հունվարի 2004թ.	12,035
Տարվա ծախս	839
Օտարումներ	(11,616)
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	1,258
Տարվա ծախս	1,258
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	2,516
<b>Չուտ հաշվեկշռային արժեք</b>	
Առ 1 հունվարի 2004թ.	3,358
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	2,519
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	34,061

## 14 Հետաձգված հանքաարդյունաբերական ծախսումներ

	<b>2005թ. հազ. դրամ</b>
<b>Սկզբնական արժեք</b>	
Առ 1 հունվարի 2004թ.	425,798
Ավելացումներ	100,828
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	526,626
Ավելացումներ	508,949
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	1,035,575
 <b>Կուտակցված ամորտիզացիա և արժեզրկումից կորուստներ</b>	
Առ 1 հունվարի 2004թ.	105,105
Արժեզրկումից կորուստներ	377,190
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	482,295
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	482,295
 <b>Չուտ հաշվեկշռային արժեք</b>	
Առ 1 հունվարի 2004թ.	320,693
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	44,331
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	553,280

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հանքաարդյունաբերական ծախսումները վերաբերում են Հայաստանի հյուսիսում գտնվող Թեղուք հանքին: Թեղուք հանքն իր մեծությամբ երկրորդ ամենախոշոր հանքն է Հայաստանի պղնձամուլիբդենային հանքերից: 2005թ. վերջի դրությամբ Թեղուք հանքում հանածոների արդյունահանման տնտեսական նպատակահարմարությունը դեռևս չէր հաստատվել: 2005թ-ին հետաձգված հանքաարդյունաբերական ծախսումների գծով ամորտիզացիա չէր հաշվարկվել, քանի որ հանքից հանածոներ չէին արդյունահանվել և մշակվել:

## 15 Երկարաժամկետ ներդրումներ

	2005թ. հազ. դրամ	2004թ. հազ. դրամ
<b>Վաճառքի համար մատչելի</b>		
<i>Սեփական կապիտալի գործիքներ - չգնանշված</i>		
«Մանես» ԲԲԸ	38,555	38,555
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	26,269	26,269
«Վալլեքս Այ Թի» ՓԲԸ	5	5
	64,829	64,829
Արժեզրկման գծով պահուստ	(39,182)	(39,182)
	25,647	25,647

### Սեփական կապիտալի չգնանշված ներդրումներ

Սկզբնական արժեքով ներկայացված վաճառքի համար մատչելի ներդրումներն իրենցից ներկայացնում են սեփական կապիտալի չգնանշված արժեքի բաժնի: Այս ներդրումների համար ակտիվ շուկա չի գործում, և վերջերս չեն իրականացվել այնպիսի գործարքներ, որոնք կտրամադրեին վկայություններ վերջիններիս իրական արժեքի մասին: Ի լրումն, գեղջված դրամական հոսքերի տեխնիկայի կիրառման արդյունքում ի հայտ են գալիս բազմաթիվ իրական արժեքներ՝ պայմանավորված դրամական միջոցների ապագա հոսքերի անորոշությամբ:

Անվանումը	Գրանցման վայրը	Հիմնական գործունեութ.	Վերահսկվող %		2005թ. Հաշվեկշռ. արժեք	2004թ. Հաշվեկշռ. արժեք
			2005թ.	2004թ.	հազ. դրամ	հազ. դրամ
«Մանես» ԲԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Չուլում	16	16	-	-
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Լեռնամետալուրգիական տեխնոլոգիաների մշակում	15	15	26,269	26,269
«Վալլեքս Այ Թի» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Համակարգիչների վաճառք	1	1	5	5

## 16 Պաշարներ

	<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Հումք	2,574,346	1,639,978
Պատրաստի արտադրանք	470,259	354,169
Անավարտ արտադրություն	69,288	101,805
Այլ պաշարներ	27,331	18,101
	<u>3,141,224</u>	<u>2,114,053</u>
Պահուստ հնացած/դանդաղ շարժ ունեցող պաշարների գծով	(345,372)	-
	<u>2,795,852</u>	<u>2,114,053</u>

Հումքը, անավարտ արտադրությունը և պատրաստի արտադրանքը ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Ողջ հումքը (պղնձի խտանյութը և պղնձի ջարդոնը) և պատրաստի արտադրանքը (սև պղինձը) գրավադրված են բանկից ստացված վարկերի դիմաց (ծանոթագրություն 21):

## 17 Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

	<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Վերականգնման ենթակա ԱԱՀ	1,979,750	932,641
Առևտրական դեբիտորական պարտքեր	1,183,029	44,804
Կանխավճարներ	950,794	592,536
Այլ դեբիտորական պարտքեր	94,284	5,684
	<u>4,207,857</u>	<u>1,575,665</u>

*Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի շարժ*

	<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Տարեսկզբի դրությամբ	-	208,569
Պահուստների զուտ (նվազում)/աճ	-	(208,569)
Տարեվերջի դրությամբ	<u>-</u>	<u>-</u>

Առևտրական դեբիտորական պարտքերի 80%-ը ենթակա է վճարման մեկ հաճախորդի կողմից (2004թ-ին՝ 66%):

## 18 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2005թ.	2004թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Կանխիկը դրամարկում	12,256	3,893
Ընթացիկ հաշիվ	111,132	669,316
	123,388	673,209

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ եկամտային հաշվում առկա 25 հազար դրամ գումարով (2004թ-ին՝ 662,831 հազար դրամ) և ծախսային հաշվում առկա 6 հազար դրամ գումարով (2004թ-ին՝ 6 հազար դրամ) դրամային ակտիվները և սպազայում այս հաշիվներում տեղաբաշխման ենթակա բոլոր դրամային ակտիվները գրավադրված են բանկից ստացված վարկերի դիմաց (ծանոթագրություն 21):

## 19 Բաժնետիրական կապիտալ

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հայտարարված բաժնետիրական կապիտալը բաղկացած էր 40,000,000 (2004թ-ին՝ 40,000,000) սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ արժեքով: 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված և ամբողջովին վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած էր 3,069,716 (2004թ-ին՝ 3,069,716) սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ արժեքով:

Թողարկված բոլոր սովորական բաժնետոմսերը գրավադրված են բաժնետերերի կողմից բանկից ստացված վարկերի դիմաց (ծանոթագրություն 21):

## 20 Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կիրառելի են հետևյալ հոդվածների հանդեպ.

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2005թ.	2004թ.	2005թ.	2004թ.	2005թ.	2004թ.
Հիմնական միջոցներ	-	-	417,671	609,692	417,671	609,692
Հետաձգված հանքաարդյունաբերական ծախսեր	-	(37,719)	45,222	-	45,222	(37,719)
Պաշարներ	(60,547)	-	-	-	(60,547)	-
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	-	-	78,224	9,202	78,224	9,202
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(155,922)	(80,139)	-	-	(155,922)	(80,139)
	(216,469)	(117,858)	541,117	618,894	324,648	501,036

## 21 Կարճաժամկետ փոխառություններ

	<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Վարկեր բանկից (3,500 հազար ԱՄՆ դոլար (2004թ-ին՝ 2,300 հազար դրամ))	1,575,665	1,117,432
Չամորտիզացված տոկոսներ	18,161	11,288
	<u>1,593,826</u>	<u>1,128,720</u>

Բանկից ստացված վարկերի հանդեպ կիրառվում է տարեկան 10.3% արդյունավետ տոկոսադրույք (2004թ-ին՝ տարեկան 10% տոկոսադրույք): Բանկից ստացված վարկերի հանդեպ կիրառվում է LIBOR-ի հետ կապակցված լողացող տոկոսադրույք: Վարկի յուրաքանչյուր մասնաբաժնից վերցված յուրաքանչյուր գումար ենթակա է վերադարձման երեք ամիս հետո:

Բանկից ստացված վարկերի դիմաց Ընկերությունը գրավադրել է՝

- բոլոր ոչ շարժական հիմնական միջոցները,
- բոլոր շարժական հիմնական միջոցները, որոնց արժեքը գերազանցում է 10,000 եվրոյին համարժեք դրամը,
- շրջանառության մեջ գտնվող ապրանքները, ներառյալ պղնձի խտանյութը, պղնձի ջարդոնը և պատրաստի արտադրանքը (սև պղինձը),
- եկամտային հաշիվը՝ եկամտային (էսքրո) հաշվում առկա և ապագայում մուտքագրված բոլոր դրամային ակտիվները,
- ծախսային հաշիվը՝ ծախսային (էսքրո) հաշվում առկա և ապագայում մուտքագրված բոլոր դրամային ակտիվները,
- բաժնետոմսեր - 3,069,716 բաժնետոմսեր,
- ապահովագրման պայմանագրերով նախատեսված բոլոր իրավունքները, շահերն ու օգուտները (ներառյալ ապահովագրության փոխհատուցման իրավունքը) և
- վաճառքի պայմանագրերով նախատեսված բոլոր իրավունքները, շահերն ու օգուտները:

## 22 Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

	<b>2005թ.</b>	<b>2004թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Առևտրական կրեդիտորական պարտքեր	3,126,968	805,443
Ստացված կանխավճարներ	935,956	36,484
Այլ կրեդիտորական պարտքեր	350,235	137,041
Վճարման ենթակա այլ հարկեր	22,448	30,466
	<u>4,435,607</u>	<u>1,009,434</u>

## 23 Ֆինանսական գործիքներ

### (ա) Պարտքային ռիսկ

Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների դիմաց: Վարկունակության գնահատումներն իրականացվում են բոլոր այն հաճախորդների համար, բացառությամբ կապակցված կողմերի, որոնք պահանջում են որոշակի գումարից բարձր վճարներ:

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը ներկայացված է հաշվապահական հաշվեկշռում յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի արտացոլված հաշվեկշռային արժեքով:

### (բ) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխությունները ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի եւ փոխառությունների վրա՝ փոխելով վերջիններիս կամ իրական արժեքը (ֆիքսված դրույքով վարկ) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով վարկ): Դեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների հանդեպ Ընկերության ենթարկվածության չափը որոշող պաշտոնական քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկ վերցնելիս/տրամադրելիս դեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

### (գ) Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը կապված է վաճառքի, ձեռք բերումների և փոխառությունների հետ, որոնք արտահայտված են ՀՀ դրամից տարբեր այլ արժույթներով: Նման ռիսկ հիմնականում առաջացնում է ԱՄՆ դոլարը: Դեկավարությունը չի հեջավորում Ընկերության ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին: Հաշվետու ամսաթվի դրությամբ պաշտոնական փոխարժեքը կազմում էր 450.19 դրամ 1 ԱՄՆ դոլարի հանդեպ (2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 485.84 դրամ 1 ԱՄՆ դոլարի հանդեպ):

### (դ) Իրական արժեք

Հայկական շուկայի իրացվելիության և հրապարակվող «ցուցանիշ տոկոսադրույքների» բացակայության պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ գործարքների մի մասը իրականացվել է կապակցված կողմերի հետ և յուրահատուկ բնույթ է կրում, հնարավոր չէ որոշել կապակցված անձանց վճարվելիք և վերջիններից ստացվելիք գումարների իրական արժեքը:

Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքը, որոնք իրենցից ներկայացնում են սեփական կապիտալի արժեթղթերում կատարած ներդրումները, հավասար է սկզբնական արժեքի և արժեզրկումից կորուստների տարբերությանը, քանի որ այս արժեթղթերը չունեն գնանշված գին և նրանց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել այլ եղանակներով:

Այլ դեպքերում իրական արժեքը որոշվում է՝ կամ հիմք ընդունելով հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական արժեքը, կամ գեղչելով դրամական միջոցների հոսքերը՝ կիրառելով մասնատիպ գործիքների համար սահմանված շուկայական տոկոսադրույքները: Արդյունքում, դեկավարությունը հավատացած է, որ Ընկերության ֆինանսական ակտիվների եւ պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում վերջիններիս հաշվեկշռային արժեքներից:

## 24 Պարտավորվածություններ և պայմանական դեպքեր

### (ա) Շրջակա միջավայրի պահպանություն

Ընկերության ղեկավարության կարծիքով Ընկերության գործունեությունը համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող Կառավարության բոլոր պահանջներին, այդ իսկ պատճառով վստահ է, որ Ընկերությունը չունի որևէ էական ընթացիկ պարտավորություն շրջակա միջավայրի պահպանության հետ կապված: Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող օրենսդրությունը մշակման փուլում է Հայաստանում, և օրենսդրության ու վերջինիս մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են հիմք հանդիսանալ հետագա էական պարտավորությունների համար:

### (բ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ հստակ չէ, հակասական է և պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ հարկային տարբեր իրավասու մարմինները տալիս են տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ուսումնասիրության իրավասու մարմինների կողմից, որոնց օրենքով իրավունք է վերապահված կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տուկոսագումարներ:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Դեկլարությունը հավատացած է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական:

## 25 Գործարքներ կապակցված կողմերի հետ

### Վերահսկողություն

Ընկերության մայր ընկերությունն է Լիխտենշտեյնում հիմնադրված ՎԱԼԵԶՍ Ֆ.Մ. Իսթերլիշմենթը:

Ընկերության վերջնական վերահսկող անձը պրն. Վալերի Սեջլումյանն է:

### Դեկլարության վարձատրություն

Ստորև ներկայացված է աշխատավարձի գծով ծախսերում ներառված տնօրեններին և վերադաս ղեկավարությանը վճարված ընդհանուր վարձատրությունը

	2005թ.	2004թ.
	<u>հազ. դրամ</u>	<u>հազ. դրամ</u>
Տնօրեններ	11,040	10,672
Վերադաս ղեկավարություն	18,907	20,714
	<u>29,947</u>	<u>31,386</u>

**Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ**

Ստորև ներկայացված են այլ կապակցված կողմերի հետ գործարքները:

**(i) Հասույթ**

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2005թ.	Մնացորդը 2005թ.	Գործարքի արժեքը 2004թ.	Մնացորդը 2004թ.
Արտադրանքի իրացում.				
Այլ՝				
«Բեյզ Սեթըլս» ՍՊԸ	132,002	713,681	98,135	294,689
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	12,992	9,204	-	9,381
«Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ	6,992	8,725	2,747	59
«Բեյզ Սեթըլս»-ի երևանյան գրասենյակ	-	175,286	6,073	22,053
Մատուցված ծառայություններ.				
Այլ՝				
«Բեյզ Սեթըլս» ՍՊԸ	53,185	-	80,209	-
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	17,170	23,672	878	391
«Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ	51,286	8,962	36,339	9,218
«Վալլեքս Այ Թի» ՍՊԸ	1,369	137	1,305	-
«Մանես» ԲԲԸ	-	-	211,531	-
«Բեյզ Սեթըլս»-ի երևանյան գրասենյակ	534	3,773	38,304	3,267
	<u>275,530</u>	<u>943,440</u>	<u>475,521</u>	<u>339,058</u>

**(ii) Ծախսեր**

հազ. դրամ	Գործարքի արժեքը	Մնացորդը	Գործարքի արժեքը	Մնացորդը
	2005թ.	2005թ.	2004թ.	2004թ.
Արտադրանքի իրացում.				
Մայր ընկերություն	-	-	22,977	23,383
Այլ՝				
«Բեյզ Սեթըլս» ՍՊԸ	6,840,295	1,270,555	4,856,983	45,081
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	4,181	4,963	-	-
«Լոռվա ԵՀԿ» ՓԲԸ	5,434	-	-	-
«Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ	75,248	-	66,621	5,255
«Վալլեքս Էֆ Էմ Իսթ.» ՍՊԸ	-	52,673	-	32,557
«Վալլեքս Այ Թի» ՍՊԸ	7,489	198	10,478	398
«Մանես» ԲԲԸ	242	-	217,706	-
«Բեյզ Սեթըլս»-ի երևանյան գրասենյակ	-	-	646,232	-
Մատուցված ծառայություններ.				
Մայր ընկերություն	-	-	-	-
Այլ՝				
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	225,798	201,860	15,063	-
«Լոռվա ԵՀԿ» ՓԲԸ	10,789	1,639	-	-
«Մանես» ԲԲԸ	-	-	402	-
«Սեթըլ Թրանս»	56,687	8,558	-	-
	<u>7,226,163</u>	<u>1,540,446</u>	<u>5,836,462</u>	<u>106,674</u>

**Գնային քաղաքականություն**

Ընկերությունը կապակցված կողմերի հետ ապրանքների իրացման ու ձեռք բերման, ինչպես նաև ծառայությունների մատուցման ու ստացման գործարքներն իրականացնում է շուկայական գներով:

**26 Էական ռիսկերի կենտրոնացում**

Ընկերությունը մեկ պատվիրատուին է վաճառում իր արտադրանքի 92%-ը (2004թ-ին՝ 99%):

**27 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր**

Հաշվետու ամսաթվից հետո տեղի չեն ունեցել բացահայտում պահանջող նշանակալից դեպքեր: